

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի:
Ստանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

(Պարագաղաբացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Ммаск“)

ՄԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրօնական ազատութիւն:—Ներքին տեսու-
թիւն: Նամակ Զալալ-Օղլուց: Նամակ խանութան-
դից: Նամակ իզմիրից: Նամակ խմբագրին: Նա-
մակ խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին
տեսութիւն: Թիֆլիս: Յիւսէփիական դեսպա-
նը Լծնդօնում: Նամակ Գերմանիայից: ՎՄշակի-
հետադիւրներ: Յայտարարութիւններ:

ԿՐՕՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Կրօնի և խղճի ազատութիւնը
մարդկութեան ամենանուիրական
սեփականութիւնից մինն է. ազ-
նիւ մարդիկ միշտ պահանջել և
պաշտպանել են մարդու այդ ա-
մենատուրը իրաւունքը, որ ոսկուց,
պատկից և կեանքից իսկ թանգ
է: Բայց մեր հայ ժողովուրդի
մէջ դեռ արծարծված չէ կրօնի
ազատութեան խնդիրը. շատերի
մոտում դեռ շատ այլասեռ դա-
ղափարներ կան իրար հետ շփոթ-
ված այս մասին:

Մեզ կովկասեան հայերիս հա-
մար, այդ խնդրի մութ լինելը
այնքան մեղադրելի չէ, որովհետեւ
դա նոր է ծագում մեր մէջ, բայց
աւելի զարմանալին դա է, որ
կրօնական ազատութեան խնդիրը
թիւրքաց հայերի մէջ, նոյն իսկ
նրանց լրագրութեան մէջ, տաս-
նապատիկ առաւել պղտոր և ա-
ռաւել շփոթված է:

Թիֆլիսի «Մեղու Հայաստա-
նի» լրագրի № 40 մէջ տպված
առաջնորդող յօդուածը մի շատ
յարմար պատկեր է այդ տեսակ
պղտոր գաղափարների: Այդ յօ-
դուածը պարզ չէ խօսում այն
պատճառով, որ նիւթը իր աչքի
առջև պարզ և որոշ չէ: Մէկ
կողմից հաւանում է կրօնի և
խղճի ազատութիւնը, իսկ միւս
կողմից պաշտպանում է հալածող-
ներին, և անուղղակի կերպով քա-
ջալերում է աւետարանական և
կաթօղիկ հայերի հալածիչներին,
անուանելով նրանց արարքը «եկե-
ղեցու իրաւունք իր հօտը պաշտ-
պանելու օտարների յափշտակու-
թիւնից, որ թոյլ չէ տալիս նը-
րանց ազատ համարձակ մուտ գոր-
ծելու իր փարախը և այնտեղից
անմեղ դառններին փախցնել»:

Այս խնդրի մէջ պէտք է եր-

կու բան իրար հետ չը շփոթե-
ր արել է յիշեալ յօդուածը.
այդ երկու բաներն են՝ ի զճի
ազատութիւնը և կրօնի ազա-
տութիւնը:

Խղճի ազատութեան թշնամի-
ներ հիմն լուսաւոր երկիրներում
շատ քիչ կը գտնվեն և այն քը-
չերն էլ միշտ ենթարկվում են
հասարակութեան արհամարհան-
քին: Այդ որ մի անձ կամ դիտ-
մամբ, կամ անգիտակցաբար իր
համոզումը, մանաւանդ կրօնական
համոզումը յայտնում է, որ ըն-
դունված, ընդհանուր կրօնի կամ
դաւանութեան հակառակ է, կամ
նրանից քիչ թէ շատ շեղվող է,
և կառավարութեան կամ ժողո-
վրդի կողմից այն անձը հալածան-
քին կամ պատժին չէ ենթարկ-
վում, — ահա դա խղճի ազատու-
թիւնն է:

Հատ ցաւալի է ասել, որ քրիս-
տոնեայ ազգերը այս սուրբ սկզ-
բունքը, որ նոյն իսկ աւետարանն
է յարգում, միշտ չեն պահել
ինչպէս ցոյց է տալիս ինկվիզի-
ցիան (հաւատաքննութիւնը) մի-
ջին դարերում, հուգենօտների,
մօրալացի եղբայրների, կիլէկէրների
և ուրիշ շատ խմբերի տխուր
պատմութիւնը: Փարիզի Բար-
թոլիմէոսի գիշերը, կամ արիւ-
նի հարսանիք ասված բտ-
մանի դէպքը խղճի ազատութեան
դէմ մեղանչելու մի նողկալի օրի-
նակն է:

Ռուսաստանի մէջ այս սկզ-
բունքը, գոնէ de facto (իրապէս)
գործադրվում է քրիստոնեայ դա-
ւանութիւնների մէջ: Այս վերջին
ժամանակում Ռուսաստանի գիւ-
ղերում պատահել էին այնպիսի
դէպքեր, որ գիւղի ժողովուրդը,
մի բանի մոլեռանդների սուռչ-
նորդութեամբ այս կամ այն կրօ-
նափոխին ծեծել տանջել էր, — և
կառավարութիւնը պատժեց այդ
ինքնակոչ դատաւորներին:

Եթէ «Մեղուն» յարգում է
հայերի այն իրաւունքը, որ նրանք
կարող են թողնել լուսաւորչական
եկեղեցին և աւետարանական կր-
օնը դաւանել դա մի մեծ ազա-
տամտութիւն չէ անում: արդէն

օրէնքը յարգում է նրանց այդ
իրաւունքը:

Սակայն բոլորովին ուրիշ բան
է կրօնի ազատութիւնը: Այդ
խօսքով իմացվում է ոչ թէ կրօնա-
կան այլ և այլ գաղափարներ կազ-
մելու և համոզումներ ունենալու
իրաւունքը, այլ նախ և առաջ այն,
որ ամեն մարդ ազատ լինի իր
ներքին կրօնական համոզմունքին
արտաքին արարողական ձև ու
կերպարանք տալու, այսինքն ու-
նենալու աղօթատեղի, պաշտօն,
պաշտօնեայ, արարողութիւն, և
այն, առանց մի որ և է կողմից
իր անձը, իր ունեցածը, կամ իր
պատիւը փտանգին ենթարկելու:

Գալով այն կէտին թէ աւե-
տարանականութիւնը ազգութա-
ցութիւն է գործել տալիս, — դա
ճշմարիտ չէ, դա երեւակայութիւն
և նախապաշարմունք է: Եթէ
«Մեղուն» պարզէ թէ ինչ է կազ-
մում հայ ազգութեան տարրի
գաղափարը, անշուշտ այդ էական
տարրի մի խոշոր մասն էլ պիտի
տեսնէր աւետարանականների մէջ:
Աւետարանականութիւնը, ինչպէս
որ ասում է իր անունը, կրօն է,
և ոչ թէ ազգութիւն, և նա կը-
րօն է բարոգում, առանց որ և է
ազգութեան դիպչելու:

Մենք տեսնում ենք Համախոս
հայ աւետարանականների օրինա-
կից, որ այնտեղի աւետարանական
հայերը իրանց ազգութիւնը ու-
նենալու և զարգացնելու համար
լուսաւորչականներից պակաս ջանք
չեն անում: Ոմանք շահախնդիրներ
յաջողել են ազգի ընդհանրու-
թիւնը համոզելու թէ հայութիւ-
նը կը պահի, կամ կը պաշտ-
պանվի միայն այս և այն ձևով,
մեր հասկացողութեամբ դա սխալ
է և որքան շուտ ազատվենք այդ
սխալից, այնքան լաւ է: Թիւրքիա-
յում անգամ ամերիկացի միսիո-
նարների գործունէութիւնը ահա-
գին զարկ տուեց ոչ միայն մեր
աշխարհաբար գրականութեանը,
այլ նայն իսկ ազգային զգացում:
ներին: Ահա հիմա ոչ թէ լուսաւոր-
չական եկեղեցին է, այլ աւետա-
րանական հայերն են, որոնք բիր-
դերի մէջ յաջողութեամբ տարա-

ծում են քրիստոնէութիւնը, որ
ի հարկէ յայտնի չէ «Մեղուն»:
Եթէ մի Գուայթ, կամ մի ու-
րիշ միսիոնար մեզ հայերիս մասին
աննպաստ, ստոյգ կամ անստոյգ,
նոյն իսկ սուտ լուրեր է տարա-
ծել, կամ տարածում, — դա ոչինչ
կապ չունի կրօնական ազատու-
թեան հետ. այդ մասին այն անձն
է միայն պատասխանատու:

Բայց թէ հայ աւետարանա-
կանները կոյր չեն այդ օրինակ
զեղծումների դէմ և թէ նրանք
անխնայ երեւան են հանում ամե-
րիկացի միսիոնարների սխալները,
— այդ ինքն «Մեղուն» կարող է
կարգաւ «Մասիսի» վերջին հա-
մարներից մէկի մէջ տպված Պար-
տիզակից գրված նամակում:

Ա. Ամիրխանեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԶԱՆԱՎՈՂԱՌՑ

Մայիսի 1-ին

Թող ներէ ինձ ընթերցողը, որ ես այս անգամ
թողած մեր դիւղի հազար ու մի տեսակ ցաւերը,
թանգութիւնը, մանր մոռնի գողութիւնները, ա-
ռուտութիւնը բոլորովին մոռնալով, անսերմ-
նացու երկրագործների լաց ու սուգը, զէպի Վանի
սովանները մի քանի պարոնների ունեցած անտարբե-
րութիւնը... և այլ շատ այսպիսի բաներ թողած, մի
քանի խօսք պիտի ասեմ մեր դրացի զարաքիլուե-
ցիներին, որոնք միշտ օխմպական դազաթից են
նայում մեզ՝ ջալալ-օղլեցիներին վրա և ամեն դէպ-
քում մեզ վրա, մեր արածների վրա ծիծաղում:—
Վարաքիլիսի թղթակցները, ինչպէս երեւում է,
միայն իրանց գիւղի լաւ կողմերի վրա են խօսում,
իսկ խոշոր պակասութիւնները ծածկում են: Ամեն
ժամանակ ջալալ-օղլեցին Վարաքիլիսիէն է շի-
նում, իսկ զարաքիլիսեցին ջալալ-օղլում և փո-
խադարձաբար մէկը միւսի պակասութիւններն էլ
գիտնեք, արժանաւորութիւններն էլ:— Եւ չեղի-
րացիները, ասենք, ինչ որ ասելու ենք:

Վարաքիլիսեցի երկու քահանայացու պատրաստ-
վում են անպատճառ ձեռնադրվել: Այս պատճա-
ռով ժողովուրդը երկու միմեանց հակառակ կու-
սակցութեան է բաժանված: Քահանայացիներից
մէկն է տիրացու (տիրացու ասելու էլ արժանի
չէ) Յովհաննէս Մխիթարեանցը, որ չը գիտեմ որ
տղէտ տիրացուի մօտ սաղմոս, ժամագրք կար-
դացել է: Քանի տարի էր այս տիրացուն ուսնայ
գիւմրեցու հետ խաչապանութեամբ էր պարա-
պում, մինչև անցնայ տարի էլ վաճառում էր դու-
քանում օղի, զինի և այլ այսպիսի համեստ բաներ,
մի և նոյն ժամանակ մաւաճաւութիւն էր ա-
նում: Այժմ այդ տղէտ, խաչապան, մաւործ, գի-
նեկաճառ տիրացուն առանց ամաչելու յանդգնում
է բաղմնը քահանայական աթոռի վրա և այն մօա-
գործ, օղիտ ձեռքերով սուրբ սկիզին մօտենալ
նոյն այդ տիրացուի տեղ տարնալիս: Եւ, թէ հա-
կնչպէս չը պիտի զարհուրէ, իր այդ ձեռքը տեղը
սկիզի մէջ կոխել:

Ո՛վ է մեղաւոր: Ի հարկէ նրանք, որոնք որ
այսօր իրանց բանն ու գործը թողած, ամեն ճիգ

Թափում են որ անպատճառ այս ամբողջութեան ձեռնարկել անհնար է: Ո՞րքեք են այդ օգնողները: Երբ մարդ, միայն երեք մարդ, որոնք հասարակութեան իսկական համոզմունքը մեղմում են իրանց ազդեցութեամբ և քաջ են տալիս իրանց ետևից: Ժողովուրդը միշտ նայում է իրանց կառավարողի ձեռքը և մանաւանդ աչքի առաջ առնելով նրա ոյժը և զօրութիւնը:

Երկրորդ քաջանայացուն է պ. Աստուածատուր Խանդավանց, որ աւարտել է Թիֆլիսի Ներսէսեան դպրոցում և շարունակ պարապել է ուսուցչութեամբ: Սորա մասին երկար խօսելու առիթըրդ է, ամենքն էլ ճանաչում են սրան: Նոյն իսկ սինօգրականներից շատերը գիտեն և ծանօթ են: Միայն կարելի, բնթմանները, կրօնականները զանազան ուղղութիւնով այս երկու քաջանայացունների դասադասութիւնը և արժանաւորութիւնը նկատելու համար մեր խօսքը կատարվի ոչ, մեր անունը կտարի: Խախտել մեզ վրա ծիծաղելն, թէ կարացին ոչ մի բան էլ է դուրս հանել, բայց մեր գլխի փափայ չունենք, թափալ չունենք, ամօթ չի մեզ... Ահա թէ ինչի են պատերազմում ճշմարտութեան դէմ: Ես կընելով նամակի խորհուրդ եմ տալիս անհնազանդ կրօնը, և հասկանալ որ իրանց ընտրած տիրացու խաչապանը ամենին արժանի չէ քաջանայութեան և շատ ստոր է կանգնած Ա. Խանդավանցից: Յաւուր եմ ձեզ վրա, պ. պ. դարաբերիցներ, որ այս ամենապարզ հարցը չէք հասկանում կամ չէք կամենում հասկանալ: Ել միւս անգամ Ջալալ-օղլեցիներին վրա չը ծիծաղէք: Այժմ բոլոր փառքակեցիք ծիծաղում են ձեր հիւանդոտ հասկացողութեան վրա:

Առ այժմ այսքան: Մեր գրիչը երկուսն զարոցները վատ չեն, միայն չեմ կարծում թէ արդիւնք երեւալ, որովհետեւ մէկ առաքական մի քանի անգամ փոխվում է մէկ վարձակալից դէպի միւսը: Եթէ նամակս չերկարէր, մի քանի կարևոր տողերով խոսեցիք էլ մեր գրիչից կը հաղորդէի:

Ջալալ-օղլեցի

ՆԱՄԱԿ ԽԱՆԿԱՆԻՑ

31 մայիսի

Շուշուց եօթը վերստ հեռաւորութեամբ դէպի հիւսիս գտնվում է Խանքանդին, որ պատկանում է Մետաք-Ղալի խանին և 1848 թիվ տեղութեան կապալով տուած է զօրանոցի համար: Այստեղ այժմ բնակվում են արաբական գունդը և տերական կազմակերպի բաժանման: Բացի զօրքերից այստեղ բնակվում են 70—100 տուն հայ, 50 տուն թիւքը և 20 տուն ռուս, այստեղ նոյնպէս բնակվում են Ներքին-Շէն գրիչի բնակիչները մի մասը, որոնք չը կարողանալով իրենց կամակոր բեկի հարստահարութեանը դիմանալ, մի քանի տարի սրանից առաջ դաղթեցին այստեղից և թողեցին իրենց գիւղը աւերակ: Խանքանդուց երեք չորս վերստ հեռաւորութեամբ գտնվում են Կրկոսան գիւղը 500 հայ բնակիչներով Խանքան 400 բն, Բալուճա 800 բն, և Խալիվալու ու փանլու գիւղերը:

Չը մտիկ տուած, որ Շուշու և Խանքանդու մէջ տարածութիւնը շատ անշուն է (ընդ ամենը եօթը վերստ) բայց այնու ամենայնիւ կլիմայի մէջ մեծ զանազանութիւն կայ: Այստեղ եղանակը տաք է լինում և օդը աւելի չոր քան Շուշուում: Շուշուց այստեղ դաղթում են այն ընտանիքները, որոնք կրօնացաւ ունեն: Տները մեծ մասը փայտաշէն են, բայց աւելի գեղեցիկ և յարմար քան Շուշու մեծ մեծ և բարձր ամրոցները, փողոցները լայն են և ուղիղ, կայ մի մեծ և գեղեցիկ հասարակական այգի: Շինվում է հայոց եկեղեցի, որը գուցէ այս տարի վերջնայ: Բացի այս Խանքանդին ունի մի մեծական թատրոնական բեմ, ուր յաճախ յաճախ լինում են ներկայացումներ ուսու լեզուով, մի գորադարան, ուր դժբաղդաւար մի հայերէն թերթ չը տեսայ, թէ և անգլաների մէջ կան 5-8 օֆիցներներ և մի քանի հայ ընտանիք, մի կուր, ուր ամեն շաբաթ լինում են ընտանեկան երեկոներ և պարահանդէսներ, կայ մի թեկ մանկու զօրծարան, ուր հարկւրաւոր կանայք և աղջիկներ աշխատում են, գտնվում է դղեակի հաշտարար դատարանը և այլ հասարակական հիմնարկութիւններ, բացի ուսումնարանից, որի մեծ կործանութիւն կայ: Սրա վրա դարձնում ենք պ. Թեմակոս տեսչի ուշադրութիւնը և խորհուրդ կը տային հէնց առաջիկայ տարիներից աշխատել և բանալ այստեղ մի ծխական դպրոց, ուր կարող են սովորել ոչ միայն

Խանքանդու, այլ և չըջակայ գիւղերի երեխաներն էլ:

Չը մտիկ տուած այստեղի բնական և արհեստական դեղեցիկութեան ու գուարճութեանց վրա, սակայն մի տաւը որ ես այստեղ բնակվելով և բաւականին ծանօթանալով հասարակութեան հետ հասայ այն եզրակացութեան, որ այստեղի հասարակութիւնը աւելի պարապված է չնչին, անպէտք և աննպատակ զօրծեղով: Թղթախաղ այս դեղեցիկ գիւղաքաղաքի մէջ մեծ ընդունելութիւն էր գտել, բամբասանքը նոյնպէս պակաս պատուար տեղը չէր բռնում: Այստեղեցիների լեզուից ամեն օր միայն նախընթաց օրվայ թղթախաղի անցքը և սաստիկ բամբասանքի ու հայհոյանքի պատմութիւններ էք միայն լսում: Բայց այնու ամենայնիւ այստեղ կենանք աւելի ուրախ է, աղաւ է և հասարակութիւնը աւելի եւրօպական ձևով է ապրում, քան Շուշուում:

Որքան ես տեղեկացայ արժանահաւատ աղբիւրներէ, այս տարվայ թանգութիւնը Խանքանդուում այնքան չէր շնչանել որքան մի մասնաւոր անաղիւն մարդու ճարտարկութիւն: Ինչպէս ասում են, այս անխնայմանք անձնաւորութիւնը օգուտ քաղելով պատահած, բայց ինքն էլ չը երազած հանգամանքից, սկսել է հարստահարել ամբողջ դղեակի աղքատ դասակարգին: Այս պարունը չը գիտեմ ինչ կերպ կարողացել է մօտ ծանօթութիւն և միջն անգամ իբրև հարազատ բարեկամութիւն սկսել այստեղի գնդապետի հետ և նրա բարեկամութիւնը աւելի բերելով, պարծենում է իր ընկերակից հասարակ ժողովրդեան առաջ ու նրանց հարստահարելով իր ցանկացած անուամբ: Այժմ որքան հաստատ փաստերից տեղեկացայ, այս գիւղաքաղաքի դեկը կատարեալ այդ աֆերիստի ձեռքն է գտնվում: Գնդապետին իր գործիք չինելով, նրա անունով ինչ անաղիւնութիւններ և միջն է անգամ բարձրորդութիւններ կարողանում է, չէ խնայում թափել իւրից հասարակութեան գրգռելի, Հարկւրաւոր եմ համարում առաջ բերել մի քանի փաստեր, քաջայայտ լինելով, որ դղեակի պ. գնդապետը գտնէ այսուհետև ուշք կը դարձնէ իրեւալ անձի գործողութիւնները վրա:

Օրինակի համար, այդ պարունը գնդապետի անունով վերցնում է մի հացալմանաւոր կաշառք և իրաւունք տալիս, որ ամբողջ դղեակի մէջ միայն նա հաց ծախի: Միւսին իրաւունք է տալիս, որ միայն նա միս ծախի և այլն և այլն, ու այսպէս մի հացալմանաւ, մի միս ծախող լինելով, գնբըրը աստիկ բարձրանում են, հասարակութիւնը հարստահարվում է ու ճարահատեալ մէկին մէկ աւելի գնբրով իր օրվայ հացը մատակարարում: Թեկ մանկու գործարանին շուր չէ տալիս, ամբողջ օրերով գործարանը թողնում է փակ ու հարկւրաւոր աղքատների զրկում իրենց մի քանի օրվայ աշխատանքից մինչև իր ցանկացած չէ ստանում: Անցեալ ձմեռը գնդապետի անունով, ասում են, հըրամայել էր մի քանի հայ և թիւքը ընտանիքներ, որոնք գուցէ տասը քսան տարի է անընդհատ բընակվում են Խանքանդուում, որ չուտով այստեղից դաղթեն, բայց չնորհիւ կաշառքի մի քանի ամիս լուում է ու մէկ էլ հիմալ նորից սկսում է լեղծ անպաշտպաններին չարարել ու հրամայել, որ դարձեալ գաղթեն: Յանկալի էր իմանալ, արդեօք այդպիսի իրաւունք տուած է այս պարունին, թէ ոչ և կամ արդեօք սորա արարմունքը յայտնի է այս դղեակի ոտարկանութեանը կամ գնդապետին: Կարծեմ կառավարութեան թողաւորութեամբ պիտի այստեղ բնակված լինեն, ուրեմն ինչու մի անհատ պիտի կարողանայ ինքնազուրկ իշխել ամբողջ հասարակութեան վրա: Ինչու մի մասնաւոր ամբողջ դղեակի կառավարչին իր գործիք չինելով նրա անունով պիտի հարստահարի հասարակութեանը և իր զրպանը ցնի:

Արցախեցի

ՆԱՄԱԿ ԻԳԻՐԻՑ

29 ապրիլի

«Մշակի» 48 համարում կարդացի երեք աստղանիշ ստորագրութեամբ մի նամակ Երևանից, որի մէջ պ. Նամակաղիլը, զատառիտելով Երևանի թեմական տեսչի օգնական պ. Պ. Պերճ Պաշտանցին, ասում է ի միջի այլոց. «Մինչև այժմ պարունը ոչ մի տեղ չէ գնացել և այլն:

Թէ պ. Պաշտանցի իր մեծ ժողովրդավանութեամբ և աղջային կենանքի ծանօթութեամբ որչափ յարմարաւոր է իր ստանձնած ծանր պաշտօնին, և թէ իր պաշտօնավարութեան սկսած օրից ցայսօր որչափ ընդարձակ է եղել նրա գործունէութեան չըջանք, այդ եթէ

յայտնի չէ երեք աստղանիշին, սակայն քաջ յայտնի է Երևանի թեմի այն բոլոր քաղաքներին, որոնց այցելել է պ. Պաշտանցի իր պաշտօնով ու մանց մէկ, իսկ ումանց երկու անգամ:

Պ. Պաշտանցի երկու անգամ այցելած դաւառներից մէկն է նաև Սուրմալու դաւառը: Պարունը առաջին անգամ եկել է իգլիկ անցեալ 1879 թվին նոյեմբերի 16-ին, ուր մնացել է 10 օր, և այդ միջոցում նա այցելել է մերձակայ գիւղերից օրական մի երկուսն և զօրծերն աւարտելուց յետոյ, ուղևորվել է դէպի միւս գիւղերը. իսկ երկրորդ անգամ եկել է իգլիկ ներկայ ամի մարտ 16-ին և մնացել է երեք օր, և դարձեալ մի և նոյն ձևով այցելելով դաւառի գրեթէ բոլոր գիւղերը, վերադարձել է Երևան:

Այս այսպէս լինելուց յետոյ ինչ շատ դարմացում է այն երկու թէ ինչպէս է պատահում, որ երեք աստղանիշը միշտ Երևանում իր աչքի առջև է տեսնում պ. Պաշտանցին, երբ վերջինս թեմի հարկւրաւոր վերստ հեռու քաղաքներում և գիւղերում է գտնվում: Երկի երեք աստղանիշի աչքերը չըբերեան հեռադիտակի տեղ են ծառայում նորան:

Գ. Փալանձարեանց

ՆԱՄԱԿ ԽԱՆԿԱՆԻՑ

Գարեժ, 26 ապրիլի

Անցեալ շաբաթ ես ձեզ ուղարկել եմ 41 բուլլի յօդուտ Վապուրականի, որ հաւաքված էր մեր ուսումնարաններից, այսօր էլ ներկայ նամակին հետ ուղարկում եմ 15 բուլլի թղթաղարամ, որոնք հաւաքած են մեր քաղաքի Լիվալ թաղի արական և իգական սեռի զարոցների երկուսն աշակերտներից, որ նուիրում են Վապուրականի աղջակներին, խնդրելով որ ինչպէս առաջին փօստովն ուղարկած 41 բուլլին, նոյնպէս և այս 15 բուլլին հասուցանէք ուր հարկն է: Ահաւասիկ նուիրատուների ցուցակը:

Արգար Տէր-Խաչան 2 դուան, Մովսէս Աղա-յան 2 դ., Մամիկոն Տէր-Ջաբարեանց 4 դ., Խա-րայէ Խաչատուրեան 2 դ., Մարգարիտ Արահա-ման 3 դ., Ալէքսան Սարգսեան 2 դ., Ալէքսան Միլքունեան 2 դ., Աղաջան Կարապետեան 2 դ., Աղաջան Մարգարեան 2 դ., Շմաւոն Գրիգորեան 2 դ., Մի անցայտ 1 դ. 15 չահի, Հայրապետ Ար-դուանեան 1 դ., Ալէքսան Մարգարեան 1 դ., Պողոս Թադէոսեան 1 դ., Մնացական Գարոթիւ-նեան 1 դ., Պետրոս Աղամեան 1 դ., Սեդրակ Բաղդասարեան 1 դ., Աթանաս Սարգսեան 1 դ., Համբարձում Բալայեան 1 դ., Գաւրիթ Մնացակա-նեան 13 չահի, Արգար Անդրէասեան 13 չ., Գաս-պար Մնացականեան 7 չ., Գաւրիթ Սաւաղեան 10 չ., Ստեփան Գալուրեան 7 չ., Անդրէաս Միլ-քունեան 10 չ., Աղաջան Բաֆայեան 4 չ., Պի-դատոս Պողոսեան 6 1/2 չ., որոց գումարն է 36 դ. 5 1/2 չահի: Օրիորդաց դպրոցի աշակերտուհիներից — Կատարինէ Վաղարեան 2 դ., Անուկա Բալա-սանեան 1 դ. 10 չ., Շուշան Բուրաղեան 10 չ.: Սոնա Բալաեան 13 չ., Գայանէ Սարգսեան 13 չ., Զաւահիր Հայրապետեան 13 չ., Վարդանուշ Թադէոսեան 10 չ., Նազուկ Մկրտչեան 10 չ., Մարգարիտ Միլքունեան 10 չ., Մալինկա Զահանեան 10 չ., գումարն է 7 դ. և 19 չահի, վերի գումարի հետ միասին դաւանում է 44 դ. և 4 1/2 չահի, որը առուսաց թղթաղարամի վերածելով, լինում է ճիշդ 15 բուլլի: Այս 15 բուլլին ներկայած եմ նա-մակին մէջ:

Արմենակ

ՆԱՄԱԿ ԽԱՆԿԱՆԻՑ

Թիֆլիս, 2 յունիսի

Կարդալով ձեր լրագրի մէջ մեր Հայաստանի սովորուած հայ եղբայրների և քույրերի դրութեան նկարագրութիւնը, հաւաքեցի այս փոքրիկ գումարը. նուիրատուաց ցուցակը խնդրեմ տպել ձեր պա-տուական լրագրի մէջ և հասցնել ուր հարկըն է:

Գէորդ Սուքիասեանց 5 ռ., А. Соколовский 1 ռ., Ստեփան Գիւնաղարեանց 1 ռ., Բաղդասար Լուսարաբեանց 1 ռ., Александра 1 ռ., մի ոմն 1 ռ., Արքաճամ Տէր-Ղևոնդեանց 3 ռ., Միքայ Բա-րայեանց 20 դ., Федотъ Владиміровъ 2 ռ., Սեր-գո Առաքելով 1 ռ., Несторъ Иносаридзе 1 ռ.,

Т. Баиндуровъ 1 ռ., Ալէքսան Հախնաղարեանց 2 ռ., Խաչան Կալալով 1 ռ., Սարգիս Խաչատրեան 1 ռ., Ստեփան Մուսարիճէ 1 ռ., Խէչօ Հայրապե-տեանց 2 ռ., Մինաս Տէր-Յովհաննէսեանց 1 ռ., Ստիկօ Մայսուրաճէ 5 ռ.: Ընդամենը 31 ռ. 20 դ.:

Գէորդ Սուքիասեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական նոր հիւպատոս պ. Շարլ Գը-կու-տուլի արդէն հասել է Թիֆլիս և ընդունել է իր պաշտօնը:

Ստացանք այս օրերս մի զարմանալի գրքոյկ ՄՕՍԿՎԱՑՑԻՑ. դա ոտանաւորների ժողովա-ծու է հետեւեալ վերնագրով «Գոն-էմանուէլի բա-նաստեղծութիւններից մի քանի ոտանաւորներ»: Սենը հայոց շատ բանաստեղծութիւններ ենք տե-սել մեր կենցաղում, բայց այդ տեսակները դեռ երբէք տեսած չենք. ոչ միտք կայ նրանց մէջ, ոչ էլ ոճի գեղեցկութիւն: Մի խախ, անմիտ գրական-ական ստեղծագործութիւն, ի ուղղագրական, լո-գիկական և տպագրական սխալներով: Ոտանա-ւորներից ոմանք այն տեսակ են, որ եթէ գլխով պատկն էլ տայ ընթերցողը, դարձեալ ոչինչ չի հասկանալ թէ ինչ է կամենում ասել հեղինակը, որ իրան պօ օ է և անունանում: Ափսոս թուղթ և տպագրական աշխատանք...:

ՎԱԳԱՐՇԱՊԱՑԻՑ գրում են. ձեմարանի հար-ցաքնութիւնները սկսվել են. վեցերորդ դասա-տունից աւարտող աշակերտներին բոլորովն պէտք է արձակեն վկայականներ տալով: Ճեմարանի կա-ռուցումը դադարեցած է. ասում են, կրկին պի-տի նուիրատուութիւններ հաւաքեն այդ չինութեան անունով: Այս օրերումս եպիսկոպոսների ձեռնա-դրութիւն կը լինի. տեղայիններից յայտնի չէ ումը կը ձեռնադրեն, բայց Տաճկաստանից մի վարդա-պետ եկել է, երկու ուրիշին էլ սպասում են:

ՍԱԼՄԱՍԻՑ պ. Բաղդ Արդուանեանը գրում է. յօդուտ Աղբակայ գաղթականների պ. պ. Տէր-Միքէլեան եղբայրների նուիրած, և «Մշակի» խրմ-բաղբատան միջոցով ուղարկված 50 բուլլին բա-տացել է և բաժանել աղբակեցի չքաւորներին: Այդ գաղթականները այժմ սկսել են վերադառ-նալ դէպի իրանց հայրենիքը:

Ս. Պետերբուրգի «St. Petersburger Herald» գերմանական լրագրի մէջ տպվեցաւ Թիֆլիսից մի թղթակցութիւն ցնչողութեան մասնաժողովի դա-տի մասին «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու դէմ, որ քննվեցաւ Թիֆլիսի նահանգական դատա-րանում մայիսի 22-ին: Թղթակիցը հաչու տալով ամբողջ դատի մասին, ասում է իր կողմից. «Այդ դատը, աւելի լաւ քան մի որ և է նկարագրութիւն լայս է գցում այն հանգամանքների վրա, որոնց մէջ գտնվում է դաւառական մամուլը, հանգա-մանքներ, որոնք շատ հեռու են դաւառական մը-պատճառով ցանկալի են որ գործ դրվեն որ և է միջոցներ այդ հանգամանքները կանոնաւորելու նպատակով»:

Ս. Պետերբուրգի գերմանական «St. Petersb. Herald» լրագրի արտատպել է «Մշակից» մի ա-ւետարանական գրած նամակը Ալեքսանդրապոլից, նոյնպէս և մեր առաջնորդող յօդուածը բողոքա-կաններով վերաբերութեամբ «Գոնէլ» այժմ ամաչէինք» վերնագրով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Թիֆլիս

Լօնդոնից հեռագրում են «Temps» ֆրանս-սիական լրագրին հետեւեալը:

Կարծում են որ Դադասոն անելու է այս օրերս մի նշանաւոր յայտնութիւն համայն-քների ժողովի մէջ արեւելեան ինգրի վերա-բերութեամբ: Անգլիական այժմեան միտիս-

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԳԼԻԱՅԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օրհորհրդական պատկերներ 20% զեղումով, վերաբերում են 6—10 ր., խոզանակներ պաշտոնական խոզանակներ 4 ր., ճեփկերի դանակներ 3—20 ր., դիմիկներ, բրդաշերտեր մեծ տարի թէյ խոզանակներ 30 ր., 3 ր., ցիտրուսային խոզանակներ շերտերի թէյ և ծառայող Բաղդեցիկ խոզանակ 70 ր., ամենալավ պորտվեյն և խոբեն 1 ր. 40 ր. շիշ, շամպայն 3 ր. շիշ:

9—20

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ պատկերազարդ հանդիմանակային ամբողջական տետրեր կը հրատարակուի յառաջիկայ յուրև ամսոյ սկզբում և կը բովանդակէ իւր մէջ, ի միջի այլոց նաև Հ. Մաղաքիա Յ. Վարդապետի 0 րմանեան, Գաբրիէլ արքեպիսկոպոսի Սյւլադեան, Միքայէլի Միւսիսարեանի և այլոց պատկերները: Բաժանորդները շարունակում են: Տարեկան գինն է 2 րուբլի արծ. կանխիկ վճարելի:

Հրատարակիչ Զարմայր Մսերեանց

10—10

Համեմատեցէք անգլիական խոզանակ թէյն գինը 1 ր. 10 ր., 1 ր. 20 ր., 1 ր. 40 ր., 1 ր. 60 ր., 1 ր. 80 ր. Ֆուռի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խոզանակներում 30%—ով թանկ են ծախվում և այլ խոզանակներ 2 րուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյն հետ:

10—100

Խնդրում եմ ՎԱՍՏԱՆԻ ԻԻ ԻՍԵՐԵԹԻ ԹԵՄԻ Հայոց Հոգևոր ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ վարչութիւններին մինչև ներկայ տարվայ Օգոստոսի 1-ը տեղեկութիւն տալ ինձ, թէ անաշխատ ուսումնական տարուայ համար ինչ անարկայի ՈՒՍՈՒՄՆՈՒ ՀԱՐԿԱԹԻՐ է իրանց յանձնաժողովում ուսումնարաններում, հարգողովով մի և նոյն ժամանակ չարաթական ԳԱՍԵՐԻ ԹԻԻԸ և ՎԱՐՁԱՏՐՈՒԹԵԱՆ չափը:

ՎԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՍԵՐԵԹԻ ԹԵՄԻ Հայոց Հոգևոր ուսումնարաններում ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՊԱՇՏՈՆՈՎ ծառայող ցանկացողներին հրաւիրում եմ ԳՐԱՌՈՒ յայտնել ինձ իրանց ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ մինչև ներկայ տարուայ Օգոստոսի 1-ը:

Թեմ. Վեր. Գ. Բարխուդարեանց:

4—4

Յունիսի 10-ից ամառային պարապմունքների համար ընդունում են աշակերտներ:

Հասցէն հետևեալն է.


Элементарная школа, Вельяминовская улица, д. Амагуни.

ՀԱՅԻՈՒՍՏՆԵՐ ԵՐԵՒԱՆԻ 4 ր., տղամարդկերանց 9—20 ր., ամբողջ հագուստը, պիշախ 5 ր., ՈՐՏԵՆԻ ԵՒ ՆԱԽԻՍԻՍ. ԱՆԳԼԻԱՅԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Բամազէյ, պարսեօն, տրիկո, դրապ, փոստի թուղթ, թաւիշ կարակերի և կարեքերի համար, կայնիկօր և այլն 25% ուրիշ տեղերից էժան: ԱՆԳԼԻԱՅԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ համեղ մուսթարներ, կօնֆետներ հազիւ դէմ, պանիր, մազնեպիա, ամաններ, կարթուրեան փօշի, սապօն, պարսկական փօշի և այլն: Այս բոլորը և ուրիշ շատ ապրանքներ կարելի է գտնել ԱՍԵՆԱԼԻՍԻ գինեղով ԱՆԳԼԻԱՅԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

10—20

ՀՅՈՒՍԵՒ ԵՒ ԿԱԿԱՍ Գրէյ և Բրիլի, որոնք Փարիզի աշխարհահռչակ ժամանակ ունէին ՆԱՍԻՍ տոնարան, վերջապէս ստացվեցաւ. ԱՆԳԼԻԱՅԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Նոյն տեղ կարձակալ ստացվեցաւ թէյ մեծ քանակութեամբ: Շատ պատուական թէյ Ֆուռ 1 ր. 20 ր., և 1 ր. 40 ր.

3—10



Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մասերի քրտնէրցի առաջ եկած փոստան ոչնչացնող յայտնի նիւթը, ԳԱՄԱՆՆԵՆ անուանով ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների գեղատեսիլ և զրօքխոսների մօտ: Գլխաւոր դէպօնիթի հնարող Գարմաշի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻՆԻ գեղատեսիլ մէջն է գտնուում, վարչապետը, Ելեկտրոնի փողոց, № 35: Գալվանիկ մէծ արկղիկը արժէ վարչապետում 50 կօպ, աւելի փոքրը 30 ր. Պէտք է ըզգուշանալ խաղախուսներից:

9—25 Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ(1)

Մամուլի տակից դուրս եկաւ զօրօր Բօկի ռուսումնաւորողական հոգեւորական Վարչութիւնը: Գրքի պահեստը զանազան է Զարաթիա Գրիգորեանցի Կովկասեան Գրախմանաւորում: Գինն է 35 կօպ.

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան Վարչութիւնը պատիւ ունի յայտնել որ արդէն դուրս եկան մասուլի տակից և ծախվում են Թիֆլիսի բոլոր գրախմանների մօտ ընկերութեան տպագրութիւնները:

№ 4 ԲԻՅԵՐ-ՍՈՍՈՒ. ԹԱՄԱՍ ԵՂՔՐ ՏՆԱԿԸ, փոխ. երկնակերի համար Պալմեր, Թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեան: Պատկերազարդ և կազմած—60 ր.:

№ 5 ՄՈՐԵՆ ԵՒ ՆՈՐԱՆ ԶՆԱՅԻՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ. աշխ. Տէր-Բարսեղեանցի: Գինն է 10 կօպէ:

Օտարաբարաբայց կարող են դիմել հետեւեալ հասցեով Վ. Թիֆլիս, Թիֆլիսկոե Օբշեստո Իզդանի արմանիկի ԿՆԻՄ.

ԲԺՇԿԱՆՈՅ

ՀԻՒՆԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՈՏԱՆ 9-13 ՄԻՆՈՒՆԻ 1 ԺԱՄԱՐ:

Երկուշաբթի. Գալվոնսի կանանց հիւանդ. Գորալի վիշնքին հ. Բօտիւնեանց կանանց և երեխաների հ. Բիւլեաբեանց խրոնիկական և աչքերի հ. Ետեմբօրսի վիշնքական և կաշու հ. Բաբայեան ջրային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Միւսի վիշնքին խրոնիկական հ. Վգօրօ վիշնքական և բողաղի հ. Բէյլի աչքի հ. Բալիւստով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կրասնօգլեալի և Կ. Իսիցեվի վ. Կ. Բարձիշի վիշնքին հ.:

Չորեքշաբթի. Լիւսիցեվի Բուգվովսի վիշնքին հ. Ետեմբօրսի կիւնիական և կաշու հ. Աստուածատուրով կանանց հիւանդութիւնները:

Հինգշաբթի. Վգօրօ վիշնքական և բողաղի հ. Բօտիւնեանց կանանց և երեխաների հ. Լիւսիցեվի վ. Կ. Բարձիշի վիշնքին հ. Բիւլեաբեանց սիւնիկիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գալվոնսի կանանց հ. Միւսի վիշնքին խրոնիկական հ. Կրասնօգլեալի և Լիւսիցեվի վիշնքին հ. Բալիւստով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Ետեմբօրսի և Աստուածատուրով վիշնքական և կաշու հ. Բաբայեան ջրային և հոգեկան հ.:

Շաբաթ. Լիւսիցեվի վ. Կ. Բարձիշի վիշնքին հ. Բաբօ վիւրքի հ. Ետեմբօրսի վիշնքական և կաշու հ. Բացի այդ բժշկի Վգօրօ բժշկանցի մէջ ընդունում է անվարձալ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժշկի Բաբայեան չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնուում է Սերգիևկա կայա փողոցի վրա, Բալանդուրովի տանը:

Ատամնաբայց Թրբիստ աղքատ հիւանդներին բժշկանցի տոմարով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ: Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանցի ընդունում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանցի դիրկաթ Լիւսիցեվ:

ԵՐԱՇՏԱԿԱՆ ԳՈՐԻՒՔՆԵՐԻ ԳԼԽԱՌՈՐ ՊԱՆՏՍ

Ի Լ Ի Ի Հ Ե Ն Բ Ի Ի Յ Ի Մ Ե Ր Մ Ա Ն Ի,

Ա. ՊԵՏԵՐՐՈՐԳ, ԲՈՒՇԱՅԱ ՄՈՐՍԿԱՅԱ, № 42

Առաջարկում են արտասահմանի ամենալավ գործարաններից նորերում ստացված երաշտական գործիքներ:

ՁՈՒԹԱԿՆԵՐ 2 1/2 ր., 5 ր., 6 ր., 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 50 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 150 ր., ԿՆՏՆՈՅՆԵՐ (СМЯЧЕВЫЕ) 50 ր., 1 1/2 ր., 2 ր., 3 ր., 5 ր., 8 ր., և աւելի թանգ մինչև 25 ր., ԱՐԿԱՆԵՐ 2 1/2 ր., 5 1/2 ր., 6 ր., 7 ր., 10 ր., և աւելի թանգ մինչև 20 ր.: Հին խաղական և գերմանական ջութակներ մինչև 600 ր.: ՁՈՒԹԱԿՆԵՐ փոքր դիւքի երեխաների համար 2 ր. 50 ր. մինչև 30 ր.: Զուգակի չիօլա (ինքնուսուցիչ) 2 ր., 3 ր., 4 ր., 5 ր.: ԱՆՏԵՐ 9 ր., 15 ր., 25 ր., 50 ր. և աւելի թանգ, ՎԻՈՒՆԵԼՆԵՐ 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր., 100 ր. և աւելի թանգ մինչև 600 ր.: Վիօլանտի չիօլա 4 ր.: ԿՈՆՏՐԱՍ 45 ր., 65 ր., 120 ր. և աւելի թանգ, ԳԻՏԱՐ 3 ր. 50 ր., 5 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 40 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Գիտարի չիօլա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 ր., 2 ր., 3 ր.: ՑԻՏԱՆԵՐ 14 ր., 16 ր., 25 ր., 35 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Ցիտարի չիօլա 2 ր., 3 ր. 50 ր., նոտաներ 40 ր., 60 ր., 90 ր. իւրաքանչիւր տեսակով: ՄԱՆԴՈՒՆ 10 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ, չիօլա 3 ր.: Ամենալավ խաղական ԼԱՐԵՐ այդ գործիքների համար, ԿԱՄԵՐՏՈՆ 40 ր., 50 ր., 1 ր., 50 ր., 2 ր., 6 ր.: Սուրբին կանիֆօլ և այլ պատկանելիք: ՄԵՏՐՈՆՈՒ 8 ր., 12 ր.: Երկաթի ծալիկ ՊԻՊԵՏԵՐ 5 ր.: Երկաթի ծալիկ պիւպերներ ժամկանքով 6 ր., 8 ր.: Գերմանական ԳԱՐՄՈՆԵՐ 4 ր., 4 ր. 50 ր., 5 ր. 50 ր., 7 ր. 50 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 24 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ, Գարմաշի չիօլա և նոտաներ 50 ր., 75 ր., 1 ր., 1 ր. 50 ր., իւրաքանչիւր տեսակով: ԿՈՐՆԱՊԻՍԱՆ 18 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Դիօլա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 ր., 4 ր., 5 ր.: ԱՆՏԻՐՆ. ՆՇԱՆԱՓՈՂԵՐ, ՏՐՈՒՐՈՆՆԵՐ, ՖԼԵՏՏԱՆԵՐ 3 ր., 5 ր., 7 ր., 10 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ: Դիօլա (ինքնուսուցիչ) 1 1/2 ր., և 3 ր., նոտաներ 40 ր., 1 1/2 ր., 3 ր. իւրաքանչիւր տեսակով: ԿԱՐՆՏԵՐ 6 ր., 8 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և թանգ մինչև 60 ր.: Կրանտի չիօլա 4 ր., Բիլիօլ, Զակաի, Զիսօլեաներ: Անգլիական ԿՈՆՏՐԱՆՏՈՒ 30 ր., 38 ր., 45 ր., 55 ր., 70 ր., 100 ր. և թանգ մինչև 160 ր.: Դիօլա 3 ր., նոտաներ 50 ր., 75 ր., 1 ր., 1 1/2 ր., Գերմանական կոնցերտինօ 3 ր., 4 ր., 5 ր., 8 ր., 10 ր., 15 ր., և թանգ մինչև 30 ր.: Դիօլա (ինքնուսուցիչ) 75 ր., նոտաներ 40 ր., և 1 ր. իւրաքանչիւր տեսակով երաշտական արկղեր 2 ր., 4 ր., 6 ր., 10 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 55 ր., 75 ր., 90 ր., և թանգ մինչև 200 ր.: ՖԻՍԿԱՐՄՈՆԵՐ 90 ր., 100 ր., 120 ր., 150 ր., 175 ր., 250 ր. և աւելի թանգ: ԳԱՐՄՈՆԵՐ ՖԼԵՏՏԻ 40 ր., 45 ր., 60 ր., 75 ր., 90 ր.: ԳԱՐՄՈՆԵՐ Ֆիլիսի ՕՐԳԱՆՈՎ 175 ր. և 225 ր.: ԶԱՐԲԱՆԿԱՍ 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր.: Խաղական շարժանական 150 ր., 200 ր., 250 ր.: ՕՐԳԱՆԵՐ Թաշտաների համար 10 ր., 15 ր.: Թաշտաներ, իտալիկներ, բուշուկներ, բանդօնիս, մետաղական ջութակների ռեկանսեր, եռանկիւններ, գարմաներ և այլն:

Օտար քաղաքներից ստացված պատուէրները կատարվում են անյապաղ և ճշգրիտ: Հանապաճաճախար գնողին էլ ծախվում են հատով և մեծ քանակութեամբ:

1—1

Յոկեֆ Տէր-Մոսէսեան Տէր-Արքայ համեմտեց զաւր արտի յայտնում է իւր ազգականներին և ծանօթներին իւր եղբոր տաճկան պատուար քաղաքացի ՆԱՎՈՐ ՏԵՐ-ԱՐԿԱՆՆԱՍ ՄԵԱՆՏԻ ազգի մահը, խնդրելով պատուել հանգուցելոյն յիշատակը և ներկայ գտնուել յուրաքանչիւր ժամանակ, որ լինելու է Շաբաթ օրը ամառ 14-ին առաւօտեան 10-ժամին: Հանգուցեալին տանելու են իւր սեփական տանից, որ գտնվում է Հաւարարի Մէլլանի մօտ Շամբորեցոյ Սուրբ Աստուածածնայ եկեղեցին

1—3

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Զար. Գրիգորեանցի Վովկասեան գրախմանաւորում Ընդհանուր աշխարհագրութիւն, Ա. տարի, Նախագիտելիք (Հայրենագիտութիւն Փիշիկի) 5 պատկերներով: Աշխատասիրութիւն Ն. Սիմեոնեանց: Գինն է 35 կօպ. գումարով առնողներին 20% զեղում կը լինի:

Մամուլի տակից, Ընդ. Աշխ. Բ. տարի, մասն ուսումնական (մասնաւորական) և Բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, մասն քաղաքական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնը աւարտուելոց յետոյ կը հրատարակուեն նոյն գները: Օտար քաղաքացիք դիմում են:

Въ Тифлисъ Кавказская книжная торговля З. П. Грикурова.

2—20

Випелъ изъ печати и поступилъ въ продажу VI томъ „Сборника свѣдѣній о Кавказѣ“, изданія Кавказскаго Статистическаго Комитета, содержащій въ себѣ:

«Тифлисъ по однопднейной переписи 25-го марта 1876 г.»

всего 570 страницъ in 4, съ 19-ю приложеніями, а именно:

- 1) 15 литографированныхъ раскрашенныхъ графическихъ таблицъ;
- 2) 2 вида Тифлиса: по Шардену (1671 г.) и Турнефору (1701 г.);
- 3) копія съ плана Тифлиса по царевичу Вахуштѣ (1739 г.);
- 4) планъ современнаго Тифлиса.

Продажа производится въ книжныхъ магазинахъ: Беренштама, Кавказской книжной торговли и Центральной книжной торговли. Цѣна 4 руб. сер.; на пересылку прилагается за 5 фунт.